

ՇԻՐՎԱՆՊԱՒԵՆ, ՍՈՎԵՏԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հոկտեմբերյան հեղափոխության հզոր լույսի տակ Շիրվանդադեի համար ավելի ու ավելի որոշ էր դժվոր իր ժողովրդի փրկության ուղին Դժվարին. երբեմն ծանր անցումներով, սակայն բայց առ բայց նա դալիս էր դեպի հեղափոխությունը: Սովետական Ռուսաստանում ծավալված քաղաքացիական կռիվները, հեղափոխական բուռն շարժումներն Անդրկովկասում, արդեն հաստատված սովետական կարգերը Ադրբեջանում հետզհետե կատարում էին իրենց վճռական դերը. մեծ գրոհն սկսում էր տեսնել ու հավատալ, որ իրոք տեղի է ունենում պատմական հեղաշրջում: Ապրելով արտասահմանում, հայրենիքից ստացված ամենօրյա թերթերի ու հեռագրերի, նամակների ու գրադրությունների միջոցով Շիրվանդադեի հաղորդակից էր դառնում իր ժողովրդի հերոսական կյանքին ու պայքարին, ամբողջ էությունը ապրում նրանով: Իրական փաստերի հզոր ազդեցության տակ, նա, ի վերջո, դալիս է այն համոզման, որ հայ ժողովրդի ապագան հավերժորեն կապված է Ռուսաստանի ապագայի հետ, որ հայ ժողովրդի գաղթը լուծելու են ոչ թե համաշխարհային կոնգրեսներն ու եվրոպական տերերի օրարի հայեցողությունը, այլ միայն ու միայն Սովետական Ռուսաստանը: Դրա ամենավաղ արտահայտությունը Մաքսիմ Խորկուն ուղղած Շիրվանդադեի 1920 թվականի հուլիսի 2-ի հայտնի նամակն է: Նա խնդրում է 'Խորկուն' իր հզոր ձայնը բարձրացնել դաշնակցության ավանայությանը դեմ դնացող քաղաքաշար հայ ժողովրդի օգտին: «Անձառա՛ն Աստի՛մ 'Խորկի'. գրում եմ Ձեզ Ամերիկայից.— ասում է Շիրվանդադե:— Թերթերից ես իմացա, որ Կովկասը գրեթե գրավված է բոլշևիկները կողմից: Սա հավատում եմ, որ Սովետական կառավարությանը կհաջողվի խաղաղությամբ հաստատել անմտորեն իրար հետ թշնամացած ծայրամասների ժողովուրդների մեջ և ենթարկել նրանց մի րնդհանուր օրենքի՝ սիրո, եղբայրության, ճշմարտության և արդարության օրենքին»:

Այդ հավատն ավելի է ամրապնդվում Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, երբ փտարանդի դաշնակները դիմում էին սանձարձակ պրովոկացիաների, ժխտում Ռուսաստանի ազատարար դերը: «...Այսօր փորձեր են լինում հայ ժողովրդին մղել ուս ժողովրդի դեմ,— գրում էր Շիրվանդադե 1922 թվականին,— մոռացվում է, որ դա այն մարդասեր ազգն է, որի հաղթական սփինն ապառել է կովկասահայ ժողովրդին պարսիկի բռնակալ լծից, ազգային ու մարդկային անպատվություններից, այդ՝ նույնիսկ վերջնական կործանումից»², Մեծ գրոհը դալրույթով էր խոստում ուս էմիրանտների, նրանց գործակցող արտասահմանյան հայ բուրժուազիայի մասին:

Հակադրվելով Սովետական իշխանության թշնամիներին, Շիրվանդադե արտահայտում էր իր անհուն սերը ազատագրված Հայաստանի հանդեպ, լիալիս հավատում նրա վաղ ապագային. ցանկանալով իր կյանքն ամբողջությամբ նվիրաբերել իր երազած Հայաստանի վերածննդին: Գործին, դառնալ նրա դալիքի պատգամախոսը: «Նա վաղուց էի երազում մի այդպիսի Հայաստան,— գրում է նա,— և այսօր երջանիկ եմ, որ տեսնում եմ նրան իմ աչքերով կյանքիս արև մուտքում: Թող լավանները շարունակեն ողբալ, թող թերահավատները իրենց թթու երգերը հորհորհեն.— ես հավատում եմ Հայաստանի, լավագույն Հայաստանի գոյությանը... Երեկ երկիրը վաշխառուների, ձրիակերների, մարդասպանների ձեռքումն էր, այսօր հանրության շահերին ու երջանկությանը նվիրված մարդկանց ձեռքերում»³, Ընդգծելով պատմական այն ճշմարտությունը, որ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո անցած շորս տարիներին հարևան ժողովուրդներն ապրում են հաշտ ու խաղաղ, Շիրվանդադե լցվում է անհուն բերկրանքով. «Եվ այսրանն ինձ համար բավական է, որպեսզի ես իմ հոգնած հոգու խորքից այս հեռավոր վայրից գոչեմ. «Թող ապրի՛ խորհրդային Հայաստանը»⁴:

Իր ելույթներից մեկում, Հայաստան վերադառնալու տոթիվ Ալ. Շիրվանդադե խանդաղատալին ասում է. «Տարիքս վաթսուն է, բայց երկիր կերթամ քան տարեկան երիտասարդի մր պես»⁵: Խորհրդային Հայաստանի հանդեպ ունեցած անհուն սերը, հայ ժողովրդի վերածննդը

1 Տե՛ս Գ. Հ ո վ ն ա ն, Մ. Դորկին և հայ կուլտուրան, Երևան, 1951, էջ 139:

2 «Ապագա», Փարիզ, 1929, № 8:

3 «Երևան», Փարիզ, 1925, № 12:

4 «Նոր ախոս», 1924, № 9, էջ 159:

5 «Թանվոր-Պարիզ», 1925, 5 սեպտեմբերի:

կյանքին իր անմիջական մասնակցությունը ցուցաբերելու նվիրական իղձերը, հիրավի, Շիրվանզադեին ձգեցին մագնիսական ուժով ու բերին, իր արտահայտությամբ՝ «լենինյան հանարով վերածնված Հայաստան» 1926 թվականի մարտին նա վերադարձավ արտասահմանից, մշտական բնակություն հաստատելով Երևանում։ Մերոնի Շիրվանզադեին վիճակվեց իր կյանքի վերջին տարիները, դրեթև մի ամբողջ տասնամյակ, պատանեկան խանդավառությամբ ապրել վերածնված Հայաստանի մեծ առօրյայով։ Նրա որոնող միտքը հղացավ ստեղծագործական նորանոր ծրագրեր։ Նոր կյանքի, նոր զգացմունքների ու առաջավոր հայացքների ոգով էլ նա գրեց մի շարք հրապարակախոսական հոդվածներ, ստեղծեց ղեկավարվեստական մի քանի նոր գործեր։

Բացառապես Հոկտեմբերյան հեղափոխությանը, լենինյան ազդային քաղաքականությանն է վերադրում Շիրվանզադեն այն մեծ ու հոյակապ նվաճումները, որ հայ ժողովուրդը ձեռք էր բերել խորհրդայնացումից հետո անցած մի քանի տարվա ընթացքում։ «Նա խոնարհում էմ իմ ալեհեր գլուխը,—ասում է նա,—լենինի հանճարեղ ուսմունքի առջև, որն սպառնի կերպով լուծել է ազդային հարցը, հնարավորություն ստեղծելով նաև մեր ազդային կուլտուրայի զարգացման համար...»⁶։ Նրա հաճախակի ու ջերմ ելույթները Հայաստանում, եղբայրական ռեսպուբլիկաներում, Մոսկվայում՝ խորհրդային դրոշմների համամիութենական առաջին համագումարի ամբիոնից, խորհրդակցություններում ու պլենումներում, նրա բազմաթիվ ու բազմաբովանդակ հոդվածները սովետական մամուլում, արտասահմանյան բարեկամներին ուղղած ողելունը նամակները զգալի ազդեցություն էին թողնում հասարակական մտքի զարգացման վրա, նպաստում սոցիալիստական հայրենիքի ամրապնդման ու ծաղկման մեծ գործին։

Շիրվանզադեի ստեղծագործական կամքը հզոր էր, ապրելու տենչը՝ անսահման։ «Նա ինչ զոլում էմ չափազանց առույզ, երիտասարդ,—ասում էր նա իր ծննդյան 75-ամյակի առթիվ ՀՀԳ-ի թղթակցի հետ ունեցած զրույցում,—ցանկանում էմ մասնակցել խորհրդային Հայրենիքի սոցիալիստական հոյակապ շինարարությանը և անձամբ ապրել ու տեսնել մի շարք հնդամյակներ...»⁷։ «Նա ուզում էմ իմ աչքով տեսնել սոցիալիզմի կատարյալ հաղթանակը»⁸,—ավելացնում է նա 1933 թվականի հունիսի 8-ին, հորելյանական հանդեսին արտասանած իր պատասխան խոսքում։ Այս ոգով էլ նա ելույթ ունեցավ խորհրդային դրոշմների համամիութենական առաջին համագումարում՝ 1934 թվականի օգոստոսին։ Այդ ելույթը, իրեն վառ օրինակ, արժանացավ «Պրավդա»-ի հարգալից ու ջերմ վերաբերմունքին։ Խորհրդային դրոշմների համամիութենական I համագումարին նվիրված «Պրավդա»-ի առաջնորդողն սկսվում է Շիրվանզադեի խոսքով. «Նա 76 տարեկան էմ, բայց երբեք ինձ այնքան ազատ չեմ զգացել, այնքան երջանիկ, ինչպես վերջին տարիներս։ Ինձ երբեմն հարցնում են. Ինչու էս չեմ ձեռնաձուլում։ Միամիտ հարց։ Չեմ ծերանում, որովհետև ապրում ու ստեղծագործում էմ Սովետական երկրում»։ «Այս բառերով,—այնուհետև ասված է «Պրավդա»-ում—ավարտեց իր ելույթը համամիութենական համագումարում Հայաստանի խորհրդային դրոշմ կենտրոնի Շիրվանզադեն։ Այս բառերում արտացոլված է մեր մեծ ժամանակի յուրահատկությունը»⁹։

Արվեստի ու դրականության ասպարեզում մեր հաջողությունները համարելով աննախընթաց, Շիրվանզադեն ընդգծում էր կյանքի հետ ստեղծագործողի սերտ կապի կենսական անհրաժեշտությունը, գտնելով, որ կոլտնտեսային դուրը, կոլտնտեսականների «հերոսական պայքարն ու աշխատանքը դեռ չեն դառնել դրոշմների ստեղծագործության առանցքը»¹⁰։ «Մենք դիտենք, որ հետ ենք մնում ձեռնարկից,—ասում էր նա Մոսկվայի ձեռնարկությունների հարվածային բանվորների հետ ունեցած հանդիպման ժամանակ,—բայց... մենք հանդիստ կերպով կարող ենք հայտնել այն համոզմունքը, որ հաղթանակը մոտավորապես 111, Այդ մոտավորապես հաղթանակը, սակայն, նա համարում էր հնարավոր այն դեպքում միայն, երբ դրոշմ ավելի խրատապահանջ կլինի իր նկատմամբ, «արվեստը արհեստ և դրականությունը՝ սոսկ դրություն»¹²։

6 «Խորհրդային Հայաստան», 1932, № 79

7 «Խորհրդային Հայաստան», 1933, № 130.

8 «Գրական թերթ», 1933, № 10.

9 «Պրավդա», 1934, 23 օգոստոսի.

10 «Գրական թերթ», 1933, № 11.

11 «Литературная газета», 1934, № 112.

12 «Գրական դիրքերում», 1930, № 11—12.

չի դարձնի: Շիրվանդադեն սրում էր զեղարվեստական երկի որակի բարձրացման, զրական տեխնիկայի տիրապետման, լեզվի մշակման ու ոճի ստեղծման հարցերը. «Տալ մեր բանվորա-դյուղացիական մասսաներին զեղեցիկ, զարդարուն լեզու, զեղեցիկ ոճ... Ահա մի բան, որի համար պիտի պայքարեն մեր զրոգները»¹³: Շիրվանդադեն ստեղծագործողից պահանջում էր անկեղծություն, ճշմարտացիություն, ժողովրդայնություն: Նա հաճախ բերկրանքով էր րնդդծում այն իրողությունը, որ սովետական կառավարությունը ստեղծում է բոլոր հնարավորությունները զարգացնելու հայ մշակույթը, մեր գրականությունն ու կուլտուրան՝ ժողովրդի մեջ, ժողովրդի համար: «Այդ երևույթը ինձ շափաղանց շատ է ուրախացնում, —ասում էր նա,— և ես մեկն եմ այն զրականագետներից, որ ողջունելով կառավարության այդ քայլը, եկել եմ ուժերիս չափով այդ ուղղությամբ աշխատելու»¹⁴:

Սվ իրոք, բազմաբովանդակ էին մեծ դրողի ծրագրերն ու մտահղացումները, զրող, որն իր ծերության պատկառելի հասակում իսկ կարողացավ ստեղծել զեղարվեստական մի քանի բարձրարժեք երկեր և դառնալ սովետահայ գրականության ձևավորման ակտիվ մասնակիցը: 'Կոաջին նշանավոր երկր, որ Շիրվանդադեն ստեղծեց Խորհրդային Հայաստանում, «Մուրղանի խնամին» (1926) կոմիդիան է, որը բեմադրվեց 1927 թվականին Երևանում, ապա՝ Վրաստանում ու Լեդրերշանում, ձեռք բերելով լայն ժողովրդականություն (1930-ին լույս տեսավ առանձին զրքով):

20-ական թվականների գրական բուռն շարժման մեջ լայն տեղ գտած Երգիծանքը իր անմիջական արտահայտությունն էր ստանում նաև թատրոնում, թատերգության մեջ. քաղաքական կոմեդիան առաջատար դեր էր խաղում, դառնում հզոր գեներ թշնամու, կյանքի հնացած ձևերի դեմ մղվող պայքարում: Հակահեղափոխության, հասարակական կյանքի արատների դեմ ծավալվող սուր պայքարում ծնված Գ. Դեմիրճյանի «Քաջ Նազար» (1923) հեքիաթ-կոմեդիայի, Լ. Չարենցի «Կապկապ-թամաշա»-ի (1923) հետ միասին, Շիրվանդադեի «Մուրղանի խնամին» կատակերգությունը դարձավ քաղաքական սատիրայի ակնհայտ նվաճումը 20-ական թվականներին, սովետահայ դրամատուրգիայի հիմքը:

Եթե Ե. Դեմիրճյանը դիմում էր հեքիաթ-կոմեդիային, հմտորեն օգտագործելով ժողովրդական ստեղծագործության և՛ թեման, և՛ սյուժեն, խարանելով ավանտյուրիզմն ու հասնելով զեղարվեստական լայն ընդհանրացման, Եթե Լ. Չարենցն իր կոմեդիան կառուցում էր ժողովրդական թամաշա-ներկայացումների վրա, մերկացնելով անդրկովկասյան նացիոնալիստական պարտիաների հակաժողովրդական գործունեությունն իրենց իսկ արյունոտ տիրապետության շրջանում, ապա Շիրվանդադեն, անկաշկանդ օգտագործելով դասական կատակերգության արտահայտչական հարուստ միջոցներն ու իր հսկայական փորձը, պատկերում էր նացիոնալիզմը սնող հայ բուրժուազիային՝ Լմիկրացիայում: Եթե «Քառս»-ում նա քննադատական ռեալիզմի մեծ ուժով բացահայտում էր հայ բուրժուազիայի գիշատիչ էությունն ու միաժամանակ նրա հիմքերի խախտությունը, ապա կատակերգության մեջ ներկայացնում էր «հայրենի» կապիտալն ու իշխանությունը հավիտենապես կորցրած, միջազգային իմպերիալիզմի գործակալ բուրժուազիային: «Մուրղանի խնամին» հայ բուրժուազիայի դամբանադիրն էր: Կոմեդիայի բախումները հիմքը դարձնելով հայ վտարանդի բուրժուազիայի և ազատագրված հայ ժողովրդի սոցիալիստական կյանքի հակադրությունը, Շիրվանդադեն անողոր ճշմարտացիությամբ ստեղծում էր բեմական վառ ու արտահայտիչ տեսարաններ, կոմիկականի հետ՝ դրամատիկական լարված գործողություններ, կենդանի կերպարներ ու պատկերներ: Շիրվանդադեն դրան հասնում էր խորապես ճանաչելով կապիտալիստական աշխարհը: «Այդ նա կարող է անել. լավ է ճափաչում նրանց, — լիակատար վստահությամբ ասում էր Հայաստան ժամանած Մ. Գորկին, իմանալով հայ Լմիկրանների կյանքը պատկերող Շիրվանդադեի նոր կոմեդիայի մասին:—Старик может»¹⁵:

Կոմեդիայում ներկայացված են Մինթոյան հայրը՝ իր համախոհներով, որդի Մինթոյան ժորժը՝ իր րնկերներով: Թեև ավագ սերունդը զրկված է ազգային կապիտալից, բայց և հոխորտում է Սովետական Միության դեմ, երազում հին կարգերի վերականգնման մասին, հույսը դրած օտար կապիտալի վրա: «Բուլշևիկների ջիզարը զաղելու» իր պլանները հայր Մինթոյանը կառուցում էր «խնամի Մուրղանից» սպասվող ղոլլարների վրա: Նրա սանձարձակ ու ցնորամիտ

13 «Խորհրդային Հայաստան», 1934, N 24:

14 «Մարտակոչ», Թբիլիսի, 1926, N 54:

15 Ս տ. Զ ո Ր յ ա ն, Հուլիսի գիրք, Երևան, 1958, էջ 240:

Ֆանտազիան հասնում էր այնտեղ, որ նա այդ երեակայական գումարներով կամենում էր հրահանգել «ցար Նիկայային» պատերազմ սկսելու Սովետական Ռուսաստանի դեմ: Նրա ծրագիրն է՝ «չափսն չստանալ ստորավենատր վազտանավիտ» անել, ապա հանքերը ծախել ու նորից վերադառնալ Փարիզ: Ազգի, հայրենիքի մասին շաղակրատող խոշոր բուրժուազիայի այս տիպիկ ներկայացուցիչն իր իսկ ծրագրով բացահայտում է հայ բուրժուազիայի ապագայինացման բուն էությունը:

Ի հակադրություն հայր և որդի Մինթոյանների, Շիրվանզադեն իր կոմեդիայում հանդես է բերում նաև ազնիվ մարդկանց (Լիզան՝ Մինթոյանի աղջիկը, Արտաշեսը՝ նրա աներորդին): Որոնք խորապես համակրում են կոմունիստներին, մերկացնում մոլորանների առաջ ստորաքարշ մինթոյաններին, Սովետական Ռուսաստանի դեմ նոր արշավանքներ կազմակերպելու ցնորամիտ երազներով տարված շպուկներին: «...Ջուր եք երևակայում, թե այնտեղ, Ռուսաստանում, նախկին կարգերը վերականգնվելու են: Ոչ, ոչ, հազար անգամ ոչ, ամեն բան վերջացած է, մենք այլևս չենք կարող վերադառնալ մեր երկիրը...», — համոզված ու վճռականապես հայտարարում է Լիզան: Դառնացած կյանքից, զգված շրջապատում իշխող այլանդակություններից, մարսանկեղ ամուսնուց, Ամերիկայի առաջ ստորաքարշ ծնողներից, ատելով ու արհամարհելով հոխորտացող էմիգրանտ զենկերային, նա իր հայացքն ուղղում է դեպի Սովետական Միություն, դեպի Ռուսաստան: «Ինչ վերաբերում է ինձ, ինչով էլ վերջանա դործը, — ասում է նա, — վերադառնալու եմ Ռուսաստան»:

Շիրվանզադեն ստեղծեց խորապես ռեալիստական գործ՝ արտահայտելով հայ բուրժուազի կոմիկական փիճակը արտասահմանում: Անսանձ ձգտումների ու ռեալ հնարավորությունների սուր հակասությունը դառնում է բախումների ու գործողությունների շարժիչ ուժը: Կոմիկական է, երբ հայ վատտանդի ժուրժուան առանց նյութական բազայի ու մարդկային կենդանի ուժի, երկվակյական հարձակումներ է գործում Սովետական Միության վրա: Կոմիկական է, երբ նա հարստությունն ու իշխանությունը կորցրած, կրկին փախվալով է «հայրենիք» վերադառնալու, կորցրած կապիտալը ետ խլելու, մասնավոր սեփականությունը վերականգնելու իր սին երազները:

Իր տաղանդի ամբողջ ուժով Շիրվանզադեն ցույց է տալիս, թե ինչպես բոլոր շպուկներին ու մինթոյանները, իր իսկ Մինթոյանի արտահայտությամբ՝ «էյֆելի աշտարակի գլխից» դահավեժ գլորվում են դեպի անկում: Եվ այդ անկումը առավել ակնհայտ է երևում օրրստօրե ծաղկող ու ամրապնդվող սոցիալիստական հասարակարգի առկայության պայմաններում:

Շիրվանզադեի կյանքը Սովետական Հայաստանում նշանավորվեց նաև «Կյանքի բովից»: Հուշագրային երկի ավարտումով ու վերամշակմամբ, երկ, որը հանդիսացավ մեծ գրողի հայացքների, դրական-դեղատրտական բմբուռումների, սոցիալական հարցերի մեկնաբանման հանրագումարը: Չնայած առանձին սուրյեկտիվ մոտեցումներին ու զնահատումներին, Շիրվանզադեն կարողացավ հայ հասարակական-քաղաքական կյանքը, արտասահմանյան իրականությունը ներկայացնել իր առաջավոր հայացքների մեկնաբանությամբ, ստեղծելով կառուցվածքով յուրօրինակ, դադափարական բովանդակությամբ հարուստ, արվեստով բարձր մի երկ, որը մտավ հայ դրականության ռսկե ֆոնդը: Այսպես 1910 թվականից Շիրվանզադեն այն շարունակեց 1924—1925 թթ. արտասահմանում, ավարտեց և դրած մասերն ամբողջությամբ վերամշակեց 1929—1932 թթ., խոր ծերության հասակում:

«Կյանքի բովից» երկի առաջին մասում ընթերցողը քայլ առ քայլ հետևում է Շիրվանզադեի «ստեղծագործողի քաղաքական ու էսթետիկական հայացքների ձևավորմանն ու զարգացմանը, տեսնում ընտանեկան, հասարակական ու դրական այն միջավայրը, ուր սովորել ու աշխատել է նա՝ մերթ իրբեղրազի, հաշվապահ ու դրադարանավար, մերթ թղթակից ու հանդեսի պատասխանատու քարտուղար և ապա իրբեղ հայ ռեալիստական դրականության խոշորագույն ներկայացուցիչ Մեր առջև վեր է բարձրանում մեծ գրողի կերպարը, ակնհայտորեն երևում այն բուռն պայքարը, որ նա մղել է դրականության ռեալիստական ուղղության հաղթանակի համար:

Մերժելով դրական այլազան հոսանքները՝ սիմվոլիզմը, ֆուտուրիզմը, նատուրալիզմը, Շիրվանզադեն դառնում է ռեալիստական ուղղության դրոշակակիրը: Հայ արձակագրության մեջ: «Ուսումնասիրի՛ր երևույթը, գտի՛ր նորա պատճառները և ընդհանուր օրենքը, ընդհանուր կապը, բոլոր ուժերը գործ դիր այդ ընդհանուր օրենքների և կապի վրա», — ստեղծագործողից պահանջում էր Շիրվանզադեն, ինքն էլ հավատարիմ մնալով այդ ճշմարիտ սկզբունքին: Ոչ թե փաստերի մեխանիկական կուտակում, երևույթների կամայական մեկնաբանություն, այլ կյանքի օրինաչափությունների ուսումնասիրություն, երևույթների փոխադարձ կապի, պատճառի ու

հետևանքի, ընդհանուր օրենքների գիտակցում. այս առողջ սկզբունքով է Շիրվանզադեն կապվում ժողովրդի հետ, ձգտում հասկանալ նրա կենսական շահերը, արտահայտել նրա նվիրական տենչերը: Այս տեսանկյունով էլ նա դիտում է կյանքի ու դրականության, ժողովրդի ու դրողի սերտ կապի և փոխհարաբերության հարցերը:

«Կյանքի բովից» հուշագրության երկրորդ մասում Շիրվանզադեն արտահայտում է արտասահմանյան իր առաջին ուղևորության հինգ տարվա (1905—1910) տպավորությունները: Նա շրջում է Փարիզի արժանահիշատակ վայրերը, տեսնում թանգարաններում կուտակված հրաշալիորժ ստեղծագործությունները, լինում սրճարաններում ու խաղատներում, թափառում նկուղներում ու մարդաշատ շուկաներում, լսում գիտնականներին ու քաղաքական գործիչներին, պառլամենտի ամբիոնից բուրժուազիային մահ ազդարարող Ժան Ժորեսի հուժկու ձայնը: Եվ նրան ներկայանում է «Եղեղեցկուհի» Փարիզն իր ճշմարիտ կերպարանքով, իր բարդ ու սոցիալական ազդակող հակասություններով: Խոշոր արվեստագետը տեսնում է այդ ամենը և նրա խորագրաց հոգին լցվում նոր խոհերով ու մտորումներով: Նա գալիս է այն համոզման, որ ոչ մի խստագույն պատիժ չի կարող վերացնել ռժիսն ու ոճագործներին, քանի դեռ չեն խորտակված դրանց ծնող ու սնող պատճառները, բուրժուական հասարակարգը՝ իր բոլոր բաստիլներով: Մահվան դատաւճի՞նքը Դա ֆիկցիա է: Երկյոտի՞նքը: Նա որպես պալիատիվ, անգործ է ուժի տեղի դնում, — ասում է Շիրվանզադեն՝ վկայակոչելով ճշմարտության ուղին հավաստող Ժան Ժորեսի խոսքը. — Հասարակական իրավակարգերը պիտի առժամապես փոխել... Միայն սոցիալիզմը կարող է մարդկային զագրելի բնագոյնը սանձահալել» (ընդգծումը մերն է — Նով. Ղ.):

Երկու Փարիզ, ազդային երկու կուլտուրա. «Մարդկային լավագույն և վատագույն բարքերի խառնուրդ», — ասում է Շիրվանզադեն, հավատալով լավագույնի հաղթանակին: Մեջբերելով տասնյակ փաստեր, նա վառ դույններով ու ճշմարտապես ներկայացնում է բուրժուազիայի քայքայվող արվեստը: Ռեալ կյանքի զգացողությունը կորցրած սալոնային քաղցրեման ու բուրժուական ինտելիգենտ արվեստի մեջ որոնում են անսովորը, այն հռչակելով իրեն նվաճում: Հասկանալի է, որ այս միջավայրում խեղդվում էր իսկական արվեստագետը, խլանում նրա ճրճարիտ ձայնը: Հիշատակելով բաղմամբով ցայտուն փաստեր, Շիրվանզադեն հայ քանդակագործ Անդրեաս Տեր-Մարությանի մասին անհուն կակիծով գրում է. «...Նա աշխարհի ամենաթանձ թառսի մեջ բախտ էր փնտրում, և մահ դտավ: Եթե քանդակագործը մեռնում է աղքատության մեջ, չդիմանալով բուրժուական աշխարհի անսանձ մրցակցությանը, ապա նաղեծղա Պապայանիս՝ «Ժողովրդի աչքում անձեռնմխելի երեացող աննման երգչուհուն» գաղունահար են անում «ոեակցիայի խուլիգանները»: Քեմեն ինչ կուրցրինք, — ասում է Սիամանթուն՝ զգված Լիբրոպայից, դաշնականների «երկնային պատգամներից» և ամոթալի «ազգային դործունեությունից», — խնայենք գոնե մեր ազգային պատվասիրությունը ու թրե՛նք այդ պառլամենտներուն ու մինիստրներուն վրա»:

Դիտելով Փարիզում անկումային և դասական արվեստի հարյուրավոր գործեր, Շիրվանզադեն տեսնում է ուշագրավ եզրահանգումներ, տալիս ռեալիզմի, իրականության ու երեակայության կապի իր ըմբռնումը, իրականության խոր ճանաչողությունը համարելով ճշմարիտ արվեստի գրավականը. «...Իրականությունը չէ, որ պիտի ընթանա երեակայության հետևից, այլ ընդհակառակը՝ երեակայությունը պիտի ղեկավարվի իրերի ճշգրիտ ուսումնասիրությամբ»:

«Կանքի բովից» երկի երրորդ մասում, որ վերնագրված է «Օտար ափերում», Շիրվանզադեն պատմում է արտասահմանյան իր երկրորդ ուղևորության տպավորությունների մասին: 1919 թվականի օգոստոսին մեկնելով արտասահման, փախչելով «այլևս անտանելի դարձած մթնոլորտից», Շիրվանզադեն ձգտում էր «առժամանակ դտնել հանգստություն», ճանաչել «այրենիքից դուրս մղված «հայ ժողովրդի ցիրուցան բեկորներին»: Նա այցելում է Պոլիս, Եգիպտոս, Իտալիա, Ֆրանսիա, Ամերիկա:

«Կյանքի բովից» հուշագրության երրորդ մասի մի շարք գլուխներում ևս Շիրվանզադեն անդրադառնում է արվեստի ձևի ու բովանդակության, գրողի ու ժողովրդի, կյանքի ու գրականության փոխհարաբերության հարցերին: Դիտելով Այա Սոֆիան՝ մարդկային այդ հրաշալիորժությունը, Շիրվանզադեն հիացմունքով ասում է. «Երեք զլխավոր պայմաններ ունի արվեստն իր բոլոր ճյուղերում, — պարզություն, ուժ և շափի զգացում: Երեքն էլ խստիվ պահպանված են Այա Սոֆիայի կառույցի մեջ»: Եվ բազդատելով ճարտարապետության բյուզանդական ու գոթական ոճերը, նա ավելի ցայտուն կերպով է բացահայտում իր դեղադիտական հայացքները:

Անհագուրդ հետաքրքրությամբ դիտելով հունական ու հռոմեական արվեստի կոթողները Շիրվանդադեն խորհրդածում է կյանքի ու արվեստի փոխհարաբերության մասին. «Մարդ որքան շատ է դիտում արվեստի հրաշալիքները,—ասում է նա,—այնքան շատ է սիրում կյանքը. Սակայն,—անմիջապես ավելացնում է նա,—այն արվեստն է ազդեցիկ, որ կյանքի արտադրությունն է: Ըստ իս ամենահանձարեղ դասականները ամհնախորն ունայիստներն են. այսպես ե՛ր հունական ու հռոմեական արվեստները, մանավանդ արձանագործությունը: Արվեստի ուժը ունայիզմն է, կյանքի ճշմարտացի արտացոլումը. ահա այն հիմնական եզրահանգումը, որին հասնում է մեծ դրոզը արվեստի հարցերի շուրջն արած իր երկար խորհրդածություններից հետո: Նման դրոզն իր արվեստով ներգործում է ժողովրդի զգացմունքների վրա, կազմակերպում նրա ուժերը, ունենալով դաստիարակչական հսկայական նշանակություն, ապա նույնքան մեծ ու անփոխարինելի է ժողովրդի փոխադարձ վերաբերմունքը, նրա անմիջական ու բուռն հետաքրքրությունը դեպի արվեստը. «Որքան մեծ է ժողովրդի հետաքրքրությունը դեպի արվեստները, այնքան մեծ են նրա արվեստագետները: Այս փոխադարձ կապն ու փոխազդեցությունը անտարակուսելի է իսկական արվեստի առկայության պայմաններում, իսկական արվեստի հանդեպ անտարակուսելի է ժողովրդի ցուցաբերած բուռն հետաքրքրությունը: «Նրա Բենվենուտո Զելլինի» որե՛լ արձանը ձուլվում էր,—ասում է Շիրվանդադեն,—ամբողջ Հռոմը հետաքրքրվում էր արդյոք պղինձը հալո՞ղ դուրս կգա: Բսկ երբ ստեղծագործողը աչքը հառում է պատվիրատուին, արվեստը դարձնում վաճառքի առարկա, հասկանալի է, խոսք չի կարող լինել իսկական ստեղծագործության, ունայիստական հղոր արվեստի մասին. ստեղծագործողը դառնում է ճարպիկ գործարար, արվեստը փոխարինելով արհեստով, վսեմ ոռմանտիկան՝ գորշ հաշվարկումներով, կյանքի խոր ճշմարտությունը՝ պատվիրատուի կամայականությամբ:

Շիրվանդադեի կարապի երգը հանդիսացավ «Վերջին շատրվան» (1934) կինոսցենարը. ուր պատկերվում է կապիտալիզմի մայրամուտը, բանվոր դասակարգի պայքարը հանուն ազատության: Նա ցանկանում էր ավարտել նաև «Վարդան Ահրումյան»-ը, դրել «Քառս»-ի երկրորդ հատորը, պատկերել նավթային բուրժուազիայի ծագումն ու անկումն Անդրկովկասում, սակայն վերահաս մահը անկատար թողեց նրա իղձերը: Իայց այն, ինչ ստեղծեց ավելի քան կես դարում, խորհրդային Հայաստանում ապրած տարիներին, դարձավ նրա անունը հովերժացնող «անասան մի կոթող» (Զարենց), հայ մշակույթի փառապանծ էջը:

Հ. ՂԱԶԱՐՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱԳԱՏՈՒԹՅՈՒՆԸ «ԱՆԻ» ԱՄՍԱԴՐՈՒՄ

Արևրորդ համալսարհային պատերազմից հետո՝ 1946 թ. Քեյրուսթում սկսեց լույս տեսնել «Անի» ամսագիրը: Այն, որոշ քննադատներով, գոյատևեց մատ տասը տարի, մինչև 1955 թ. և նշանակալից գեղ կատարեց սփյուռքահայ գրական կյանքում: «Անի»-ի առաջին իսկ համարից զգացվեց, որ ծնունդ է առնում գրականության և արվեստի մի նոր ու լուրջ ամսագիր, որն ուներ առաջադիմական ուղղություն, կայուն դիմացի՝ ու հասակ նպատակ: Ամսագրի խմբագիրը՝ Վահե-Վահյանը, որ մեծ նշանակություն էր այդ գործին, արդեն նախաձեռնած բանաստեղծ և հասարակական գործիչ էր սփյուռքահայ մտավոր շրջաններում: Մկանով ամսագրի հրատարակությունը, նա խորապես գիտակցում էր այն գերը, որ սփյուռքահայ հասարակական կյանքը գնում էր ինչպես գրականության, այնպես էլ գրական-գեղարվեստական մամուլի առջև: «Գրականությունը,—գրում էր նա «Անի»-ի վրա՝ խմբագրականում, որով սկսվում է «Անի»-ի առաջին համարը,—կյանքն իսկ է՝ ապրված, ապրվող կամ ապրվելիք, ձևառումը՝ եզրածին, խորատեսական, կամ տեսականորեն զուլակվածին, նյութ է, լինելիություն ու վերափոխում:Նա կարականորեն գնմ էր արտահայտվում բուրժուական էսթետների «արվեստն արվեստի համար» կամ «անաղարտ արվեստի» վաղուց սնանկացած, բայց սփյուռքի գաղութներում գնեկն իր հետևորդներն ունեցող սկզբունքին: Վահե-Վահյանը գրականությունը ես գտաում էր այն գործոնների շարքին, որոնք «կյանքը ձևավորող ուժեր» են պարունակում իրենց մեջ: Գրականությունը, հայտարարում էր նա, կտրված չէ բնկերությունը (հասարակությունը):